# ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ՉՀ-ԳՀԾՁԲ-2026/2»

ք. Չարենցավան «15» 12 2025թ.

**Չարենցավանի համայնքապետարանը**, ի դեմս համայնքի ղեկավար **Հ. Կ. Շահգալդյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԻՆՏԵԿ» ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Ս. Հովհաննիսյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում, Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **տասն** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1500000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում, վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

***4.3 Սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝***

***ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.***

***ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.***

***ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.***

***Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.***

***Ք-ն մատուցված ծառայության քանակն է:***

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների, կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի, կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է **13 (տասներեք)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:**

Ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում է նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»
Չարենցավանի համայնքապետարան
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան
հրապարակ թիվ 1
ՀՀ ՖՆ ԳՎ
Հ/Հ 900132111023
ՀՎՀՀ 03022497

Համայնքի ղեկավար՝
Հ. Կ. Ծաhակյան

(ստորագրությունը)
Կ.Տ

«ԿԱՏԱՐՈՂ»
«ԻՆՏԵԿ» ՍՊԸ
ք. Չարենցավան 6-րդ թաղամաս
3-րդ շենք թիվ 2
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220433330200000
ՀՎՀՀ 03020784
էլ. հասցեն serge81@list.ru
հեռ. (+37477) 34-52-32

Տնօրեն՝ Ս. Հովհաննիսյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված թիվ 1
«15» 12 2025 թ. կնքված
«ՉՀ-ԳՀԾՁԲ-2026/2» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը և տեխնիկական բնութագիրը* | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը |
| 1 | 50311120/502 | Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | դրամ | 1500000 | 1 | ք. Չարենցավան, Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1 | Ծառայության մատուցումն իրականացվելու է 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը) պարբերության պահանջները |

***Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ՝**

| Հ/հ | Ծառայությունների և աշխատանքների անվանումները | Ծառայության և աշխատանքի միավորի գինը, ՀՀ դրամ |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 1 | **Սերվերների, համակարգիչների, մոնիտորների և անխափան սնուցման սարքերի (UPS) սպասարկում** | |
| 1 | Պրոֆիլակտիկա (փոշիների մաքրում, աղմուկի վերացում, cooler-ի յուղում) | 2500 |
| 2 | Պրոցեսորի փոխարինում նորով 1151 socket dual core | 7500 |
| 3 | Պրոցեսորի փոխարինում նորով 1151 socket i3 | 10000 |
| 4 | Պրոցեսորի փոխարինում նորով 1151 socket i5 | 15000 |
| 5 | Պրոցեսորի փոխարինում նորով 1151 socket i7 | 75000 |
| 6 | Պրոցեսորի փոխարինում նորով 1200 socket dual core | 10000 |
| 7 | Պրոցեսորի փոխարինում նորով 1200 socket i3 | 20000 |
| 8 | Պրոցեսորի փոխարինում նորով 1200 socket i5 | 30000 |
| 9 | Պրոցեսորի փոխարինում նորով 1200 socket i7 | 100000 |
| 10 | Պրոցեսորի փոխարինում նորով 1700 socket i3 | 20000 |
| 11 | Պրոցեսորի փոխարինում նորով 1700 socket i5 | 30000 |
| 12 | Պրոցեսորի փոխարինում նորով 1700 socket i7 | 50000 |
| 13 | Համակարգչի գրաֆիկական քարտի փոխարինում GT 2XX սերնդի | 2500 |
| 14 | Համակարգչի գրաֆիկական քարտի փոխարինում GT 7XX սերնդի | 5000 |
| 15 | Համակարգչի գրաֆիկական քարտի փոխարինում RTX 3XXX սերնդի | 50000 |

| | | |
|---|---|---|
| 16 | Համակարգչի գրաֆիկական քարտի փոխարինում RTX 4XXX սերնդի | 100000 |
| 17 | Համակարգչի գրաֆիկական քարտի փոխարինում RTX 5XXX սերնդի | 190000 |
| 18 | Մայրական սալիկի (MB) նորոգում | 5000 |
| 19 | Մայրական սալիկի (MB) փոխարինում նորով ներառյալ 1150 socket MB | 7500 |
| 20 | Մայրական սալիկի (MB) փոխարինում նորով ներառյալ 1151 socket MB | 12500 |
| 21 | Մայրական սալիկի (MB) փոխարինում նորով ներառյալ 1200 socket MB | 15000 |
| 22 | Մայրական սալիկի (MB) փոխարինում նորով ներառյալ 1700 socket MB | 30000 |
| 23 | Կոշտ սկավառակի (HDD) փոխարինում նորով, ներառյալ HDD 500GB SATA, 7200 RPM | 10000 |
| 24 | Կոշտ սկավառակի (HDD) փոխարինում նորով, ներառյալ HDD 1 TB SATA, 7200 RPM | 15000 |
| 25 | Կոշտ սկավառակի (SSD) փոխարինում նորով, ներառյալ SDD 120 GB SATA | 8000 |
| 26 | Կոշտ սկավառակի (SSD) փոխարինում նորով, ներառյալ SDD 240 GB SATA | 10000 |
| 27 | Կոշտ սկավառակի (SSD) փոխարինում նորով, ներառյալ SDD 520 GB SATA | 17500 |
| 28 | Կոշտ սկավառակի (SSD) փոխարինում նորով, ներառյալ SDD 120 GB M2 | 8000 |
| 29 | Կոշտ սկավառակի (SSD) փոխարինում նորով, ներառյալ SDD 240 GB M2 | 10000 |
| 30 | Կոշտ սկավառակի (SSD) փոխարինում նորով, ներառյալ SDD 520 GB M2 | 17500 |
| 31 | Համակարգչի հովացուցիչի փոխարինում 1151 socket | 2500 |
| 32 | Համակարգչի հովացուցիչի փոխարինում 1200 socket | 2500 |
| 33 | Համակարգչի հովացուցիչի փոխարինում 1700 socket | 7500 |
| 34 | Համակարգչի ջրային հովացուցիչի փոխարինում 1200 socket | 10000 |
| 35 | Համակարգչի ջրային հովացուցիչի փոխարինում 1700 socket | 15000 |
| 36 | DVD-RW փոխարինում նորով | 10000 |
| 37 | Օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով, ներառյալ DDR2 2048M 667/800MHZ | 5000 |
| 38 | Օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով, ներառյալ DDR3 4gb 1333MHZ | 7500 |
| 39 | Օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով, ներառյալ DDR4 4gb 2400MHZ | 6000 |
| 40 | Օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով, ներառյալ DDR4 8gb 3200MHZ | 9000 |
| 41 | Օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով, ներառյալ DDR4 16gb 3200MHZ | 12500 |
| 42 | Օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով, ներառյալ DDR4 32gb 3200MHZ | 13500 |
| 43 | Օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով, ներառյալ DDR5 32gb 6000MHZ | 16000 |
| 44 | Օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով, ներառյալ DDR5 64gb 6000MHZ | 20000 |
| 45 | Նոութբուքերի օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով, ներառյալ DDR3 2048M 667/800MHZ | 3000 |
| 46 | Նոութբուքերի օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով, ներառյալ DDR4 4gb 2400/3200MHZ | 6000 |
| 47 | Նոութբուքերի օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով, ներառյալ DDR4 8gb 2400/3200MHZ | 7500 |
| 48 | Նոութբուքերի օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով, ներառյալ DDR4 16gb 2400/3200MHZ | 8500 |
| 49 | Նոութբուքերի օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով, ներառյալ DDR5 16gb 5600/6000MHZ | 9000 |
| 50 | Նոութբուքերի օպերացիոն հիշողության (RAM) փոխարինում նորով, ներառյալ DDR5 32gb 5600/6000MHZ | 11500 |
| 51 | Նոութբուքերի սնուցման բլոկի վերանորոգում | 1500 |
| 52 | Նոութբուքերի սնուցման բլոկի փոխարինում նորով, ներառյալ սնուցման բլոկ | 2500 |
| 53 | Նոութբուքերի մոնիտորների վերանորոգում | 7500 |
| 54 | Նոութբուքերի մոնիտորների փոխարինում նորով, ներառյալ մոնիտոր | 7500 |
| 55 | Նոութբուքերի մարտկոցների փոխարինում | 2500 |
| 56 | Սնուցման բլոկի վերանորոգում | 1500 |
| 57 | Սնուցման բլոկի փոխարինում նորով, ներառյալ սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 450 ՎՏ Power supply unot for P4Case 450w | 6000 |
| 58 | Սնուցման բլոկի փոխարինում նորով, ներառյալ սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 550 ՎՏ Power supply unot for P4Case 550w | 7500 |
| 59 | Սնուցման բլոկի փոխարինում նորով, ներառյալ սնուցման բլոկ Պ4 պահարանի համար 750 ՎՏ Power supply unot for P4Case 750w | 10000 |
| 60 | Մոնիտորների դիագնոստիկա | 1500 |

| | | |
|---|---|---|
| 61 | Մոնիտորների վերածրագրավորում | 1500 |
| 62 | LCD-ի լամպի փոխարինում նորով, ներառյալ լամպը 17” | 1500 |
| 63 | LCD-ի լամպի փոխարինում նորով, ներառյալ լամպը 19” | 1500 |
| 64 | LCD-ի լամպի փոխարինում նորով, ներառյալ լամպը 20” | 5000 |
| 65 | LCD-ի լամպի փոխարինում նորով, ներառյալ լամպը 22” | 5000 |
| 66 | LED-ի լամպի փոխարինում նորով, ներառյալ լամպը 19” | 5000 |
| 67 | LED-ի լամպի փոխարինում նորով, ներառյալ լամպը 20” | 5000 |
| 68 | LED-ի լամպի փոխարինում նորով, ներառյալ լամպը 22” | 7500 |
| 69 | LED-ի լամպի փոխարինում նորով, ներառյալ լամպը 24” | 10000 |
| 70 | LED-ի լամպի փոխարինում նորով, ներառյալ լամպը 27” | 12500 |
| 71 | All in one ամբողջը մեկում համակարգչի էկրանի փոխարինում նորով, ներառյալ էկրանը 24” | 17500 |
| 72 | All in one ամբողջը մեկում համակարգչի էկրանի փոխարինում նորով, ներառյալ էկրանը 27” | 22500 |
| 73 | Մոնիտորների վերանորոգում, վնասված մասերի փոխարինում նորով | 5000 |
| 74 | Անխափան սնուցում սարքի (UPS) վերածրագրավորում | 15000 |
| 75 | Անխափան սնուցում սարքի (SMART UPS) վերածրագրավորում | 15000 |
| 76 | Անխափան սնուցում սարքի (UPS) ղեկավարող սալիկի վերանորոգում | 1500 |
| 77 | Անխափան սնուցում սարքի (UPS) մարտկոցի փոխարինում նորով 12V, 7.5A | 9000 |
| 78 | Անխափան սնուցում սարքի (UPS) մարտկոցի փոխարինում նորով 12V, 9A | 10000 |
| 79 | Անխափան սնուցում սարքի (UPS) մարտկոցի փոխարինում նորով 12V, 18A | 15000 |
| 80 | Ստեղնաշարի փոխարինում նորով, ներառյալ ստեղնաշարը | 3500 |
| 81 | Մկնիկի փոխարինում նորով, լարի երկարությունը՝ ոչ պակաս քան 160 սմ, չափսերը՝ ոչ պակաս քան 11*5 սմ, ներառյալ մկնիկը | 3000 |
| 82 | Անլար մկնիկի փոխարինում նորով | 3000 |
| 83 | Համակարգիչների բարձրախոսների նորոգում | 1500 |
| 84 | Համակարգիչների բարձրախոսների փոխարինում նորով 10 Վտ հզորությամբ | 3000 |
| 85 | Մոնիտորների VGA լարի փոխարինում նորով 1.5 մ, ներառյալ լարը | 3750 |
| 86 | Մոնիտորների VGA լարի փոխարինում նորով 2 մ, ներառյալ լարը | 3750 |
| 87 | Համակարգիչների ցանցային սպասարկում | 2500 |
| 88 | Համակարգիչների ծրագրային սպասարկում | 4000 |
| 89 | Համակարգիչների ծրագրային սպասարկում լիցենզավորված windows (server 2013, 7/10/11) տեղադրում | 5000 |
| 90 | Ցանցի բաժանիչ սվիչների վերանորոգում | 1500 |
| 91 | Ցանցի բաժանիչ սվիչների փոխարինում նորով, ներառյալ սվիչ 4 պորտ | 1500 |
| 92 | Ցանցի բաժանիչ սվիչների փոխարինում նորով, ներառյալ սվիչ 8 պորտ | 5000 |
| 93 | Ցանցի բաժանիչ սվիչների փոխարինում նորով, ներառյալ սվիչ 16 պորտ | 8000 |
| 94 | Ցանցի բաժանիչ սվիչների փոխարինում նորով, ներառյալ սվիչ 32 պորտ | 10000 |
| 95 | Ցանցի բաժանիչ սվիչների փոխարինում նորով, ներառյալ սվիչ 32 պորտ POE | 12500 |
| 96 | Ցանցի բաժանիչ սվիչների սնուցման բլոկի վերանորոգում | 1000 |
| 97 | WI FI rauter-ի վերանորոգում | 1000 |
| 98 | WI FI rauter-ի փոխարինում նորով, ներառյալ WI FI rauter | 4500 |
| 99 | UTP 5E մալուխ 1 մ | 150 |
| 2 | **Տպիչների, պատճենահանող սարքերի, սվիչների սպասարկում** | |
| 100 | Տպիչների դիագնոստիկա | 4000 |
| 101 | Տպիչների պրոֆիլակտիկա | 4000 |
| 102 | Տպիչների լիցքավորում 4 գույներով | 2500 |
| 103 | Տպիչների քարտրիջի փոխարինում նորով | 10000 |
| 104 | Canon ir բազմաֆունկցիոնալ տպիչի լիցքավորում, ներառյալ տոները 300 գրամ | 5000 |
| 105 | Canon ir բազմաֆունկցիոնալ տպիչի թմբուկի փոխարինում նորով | 5000 |
| 106 | Canon ir բազմաֆունկցիանոլ տպիչի վառարանի նորոգում | 5000 |
| 107 | Canon ir բազմաֆունկցիանոլ տպիչի լազերի նորոգում | 5000 |
| 108 | Canon ir բազմաֆունկցիանոլ տպիչի սկանի նորոգում | 5000 |
| 109 | Գունավոր լազերային տպիչների լիցքավորում 4 գույներով | 5000 |
| 110 | Տպիչների վերանորոգում առանց պահեստամասերի | 10000 |
| 111 | Լիցքավորում լազերային տպիչների, ներառյալ տոները 130 գրամ | 5000 |
| 112 | Թմբուկի փոխարինում առանց լիցքավորման, ներառյալ թմբուկը | 5000 |
| 113 | Մագնիսական լիսեռի փոխարինում նորով առանց լիցքավորման, ներառյալ մագնիսական լիսեռը | 5000 |
| 114 | Մաքրող դանակի փոխարինում նորով, ներառյալ մաքրող դանակը | 2500 |
| 115 | Կարատորոնի փոխարինում նորով առանց լիցքավորման, ներառյալ կարատորոնը | 5000 |
| 116 | Տպիչի ռետինե գլանի փոխարինում նորով, ներառյալ ռետինե գլանը | 5000 |
| 117 | Վառարանի թերմոթաղանթի փոխարինում նորով, ներառյալ թերմոթաղանթը | 12000 |

| | | |
|---|---|---|
| 118 | Կառարանի ռետինե գլանի փոխարինում նորով, ներառյալ ռետինե գլանը | 12000 |
| 119 | Թղթի մատուցման ռետինե լիսեռի փոխարինում նորով, ներառյալ թղթի տրման ռետինե լիսեռը | 2500 |
| 120 | Canon 463 dw տպիչի թղթի մատուցման համակարգի (ADF) փոխարինում նորով | 7500 |
| 121 | Տպիչի ֆորմատորի փոխարինում նորով, ներառյալ ֆորմատորը | 2500 |
| 122 | Սկաների դիագնոստիկա | 2500 |
| 123 | Սկաների ռետինե գլանի փոխարինում նորով, ներառյալ ռետինե գլանը | 2500 |
| 124 | Սկաների լամպի փոխարինում նորով, ներառյալ լամպը | 8350 |
| 125 | Քարթրիջի չիպի վերածրագրավորում | 2500 |
| 126 | Տպիչի վերածրագրավորում | 2500 |
| **ԸՆԴՀԱՆՈՒՐԸ** | | **1500000** |

Ցանկացած մասի, դետալի կամ հանգույցի համար Կատարողը Պատվիրատուին երաշխավորում է վերանորոգման դեպքում՝ առնվազն 9 ամիս, իսկ փոխարինման դեպքում՝ առնվազն 12 ամիս: Ծառայության արժեքի մեջ ներառված են փոխարինվող մասերի, դետալների, հանգույցների գները: Փոխարինվող մասերը և օգտագործվող նյութերը օգտագործված չեն և արտոնագրված են արտադրողի կողմից:

Եթե Կատարողի կողմից միջամտության արդյունքում սարքի, սարքավորման հետ առաջանում են խնդիրներ, ամբողջական վերանորոգումը կատարվում է Կատարողի կողմից և իր միջոցներով:

Պատվիրատուի կողմից սարքի, սարքավորման սպասարկման հայտ ներկայացնելու (հայտը կարող է լինել էլեկտրոնային, թղթային և բանավոր) դեպքում Կատարող կազմակերպության կողմից ծառայությունը մատուցվում է՝ լիցքավորումը՝ 2 ժամվա ընթացքում, վերանորոգումը և փոխարինումը՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ Պատվիրատուի հետ համաձայնեցված հատուկ դեպքերում սահմանված ժամկետները: Վերոնշյալ համակարգչային պարագաների փոխարինումը նորով իրականացվում է միայն Պատվիրատուի պահանջով:

**«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»**
**Չարենցավանի համայնքապետարան**
**ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1**
**ՀՀ ՖՆ ԳՎ**
**Հ/Հ 900132111023**
**ՀՎՀՀ 03022497**

**Համայնքի ղեկավար՝**
**Հ. Կ. Շահգալդյան**

**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

**«ԿԱՏԱՐՈՂ»**
**«ԻՆՏԵԿ» ՍՊԸ**
**ք. Չարենցավան 6-րդ թաղամաս 3-րդ շենք թիվ 2**
**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ**
**Հ/Հ 220433330200000**
**ՀՎՀՀ 03020784**
**էլ. հասցեն serge81@list.ru**
**հեռ. (+37477) 34-52-32**

**Տնօրեն՝ Ս. Հովհաննիսյան**

**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

Հավելված թիվ 2
«15» 12 20 25 թ. կնքված
«ՉՀ-ԳՀԾՁԲ-2026/2» ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | | | Ծառայության | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թվականին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50311120/502 | Համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % | ... % |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի մատուցված ծառայությունների: Եթե պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

**Պայմանագրում գումարները նշվում են տոկոսով, իսկ համաձայնագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ:

**«ՊԱՏՎԻՐԱՏՈՒ»**
**Չարենցավանի համայնքապետարան**
**ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1**
**ՀՀ ՖՆ ԳՎ**
**Հ/Հ 900132111023**
**ՀՎՀՀ 03022497**

**Համայնքի ղեկավար՝**
**Հ. Կ. Շահգալդյան**

______________________
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

**«ԿԱՏԱՐՈՂ»**
**«ԻՆՏԵԿ» ՍՊԸ**
**ք. Չարենցավան 6-րդ թաղամաս 3-րդ շենք թիվ 2**
**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ**
**Հ/Հ 220433330200000**
**ՀՎՀՀ 03020784**
**էլ. հասցեն serge81@list.ru**
**հեռ. (+37477) 34-52-32**

**Տնօրեն՝ Ս. Հովհաննիսյան**

______________________
**(ստորագրությունը)**
**Կ.Տ**

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ

______________________

______________________

գտնվելու վայրը ____________
հհ ______________________
հվհհ ____________________

Պատվիրատու

______________________

______________________

գտնվելու վայրը ____________
հհ______________________
հվհհ______________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_______________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ___________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄԵՐԸ

**Հանձնեց**

____________________
ազգանուն, անուն

____________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

____________________
ազգանուն, անուն

____________________
ստորագրություն

Հավելված N 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_______________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ____________________-ի և ______________________-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

____________________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_______________________________________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

______________
ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.